ՀՏԴ 165.24 (479.25)

Ա.Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՆԺԴԵՀՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Հաշվի առնելով նոր մարտահրավերները՝ փորձ է արվում դիտարկելու Գարեգին Նժդեհի ինքնաճանաչողության առանձնահատկությունները և վերջինիս դերը ազգաճանաչողության հարցում:

Առանցքային բառեր. ինքնաճանաչողություն, արժանապատվություն, ինքնանվաճում, ցեղաճանաչում:

Նժդեհյան գաղափարախոսության ամբողջական ներկայացումը չի կարող ամփոփվել մեկ հոդվածի շրջանակում, ուստի փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել Նժդեհյան ինքնաճանաչողության առանցքային գաղափարները և ցույց տալ դրանց արդիականությունը մեր օրերում:

Գ. Նժդեհը մեծ զորավար էր, պետական գործիչ և փիլիսոփա: Այս եռամիասնությունը մեկտեղվել են մեկ անհատականության մեջ և գործել համահունչ:

Նժդեհի փիլիսոփայությունը ազգային ինքնաճանաչման փիլիսոփայություն է, որի հիմքը հանդիսանում է նաև ինքնաճանաչողությունը: «Ծանեա զքեզ: Կուզէի, որ իմաստասիրական այդ հրամայականը քանդակված լինէր մեր դպրոցական շէնքերի ճակատին, ապա և մեր աշակերտութեան ուղեղին մեջ» [1]:

Ինքնաճանաչումը մարդու կյանքի իմաստավորման հնագույն լուծումներից մեկն է՝սկսած հին հունական փիլիսոփայությունից մինչև այսօր: Բայց այդ լուծումները զուտ անհատական դրսևորումներ են եղել:

Գ. Նժդեհի ըմբռնմամբ ինքնաճանաչողությունը ոչ թե անձնական, անհատական դրսևորում է, այլ ինքնաճանաչումը բացահայտվում և իմաստավորվում է իբրև ցեղաճանաչում: Նժդեհի համոզմամբ՝ կյանքի իմաստավորման համար անհրաժեշտ պայման է նվիրվածությունը ցեղին, միաձուլումը նրա հետ, ինքնաճանաչման ճանապարհով ցեղայինի արթնացումը մեր մեջ: «Մարդկօրէն և ազգայնօրէն զորաւոր է նա, - գրում է Նժդեհը, - ով ազատ է ասելու-ցեղիս զավակն եմ և ահա օտարության մեջ իսկ իր կաթը կը ծծեմ» [2]:

Եթե ժողովուրդն ուզում է սխրագործությունների գնալ, ապա նախ և առաջ պետք է ինքնաճանաչ լինի: Սա է Նժդեհի պատգամը, որում ներփակված է բարդ և միաժամանակ պարզ մի ճշմարտություն:Եթե ժողովուրդն իր մեջ չճանաչի ցեղը, չի կարող պայքարել, չի կարող բացահայտել իր հնարավորությունները և անկարողությունները: Ինչպես ցանկացած անհատ քաջատեղյակ է իր անձնական տվյալներին, նույնությամբ էլ ժողովուրդը պետք է իմանա իր սեփական

ներուժի մասին: Նժդեհը գտնում էր. «Ժողովուրդների անզօրութեան և դժբախտութեան ամենաներգործօն պատճառը իր սեփական էության մասին ունեցած տգիտանքն է անինքնաճանաչողությունը»,-իմա՛ անցեղաճանաչողություն [3]:

Ինչպես ինքն իրեն չճանաչող մարդը չի կարող ճանաչել ուրիշ մարդկանց, այնպես էլ անինքնաճանաչ ազգը չի կարող ճանաչել ուրիշ ազգերին: Շարունակելով միտքը՝ Նժդեհը գտնում է, որ յուրաքանչյուր անհատի մեջ ցեղային մակարդակում սկզբունքորեն առկա են անսահման կարողություններ, որոնք անինքնաճանաչողության հետևանքով մնում են չիրականացված: «Մարդս գաճաճ է իր ներքին հսկայի բաղդատմամբ» [4]:

Ըստ Գ. Նժդեհի՝ առանց վերագնահատումի անիմաստ է որոնումը, իսկ առանց որոնումների ոչ միայն ժողովուրդների միտքն է մեռնում, այլ նաև հենց իրենք՝ ժողովուրդները: Իսկ վերագնահատումը կարելի է իրականացնել ինքնաճանաչողության միջոցով: Ինքնաճանաչողության միջոցով պետք է որոնենք, փնտրենք, գտնենք մեր դժբախտությունների իրական պատճառները, ճանաչենք մեր իսկական վերքերը, որից հետո միայն խոսք կարող է լինել բուժման մասին [5]:

Չճանաչելով մեզ, մենք մեր դժբախտությունները վերագրել ենք արտաքին պատճառների և մեր փրկությունը միշտ սպասել ենք արտաքրն ուժերից: Մենք չենք ուզում տեսնել մի պարզ ճշմարտություն «…այն է, թե մեր դժբախտությունների համար մեղավոր են ոչ թե բոլորը, բացի մեզանից, այլ նախ և առաջ մենք» [6]: Պատճառը տեսնելով մեր մեջ՝ առաջ է գալիս ինքնապաշտպանության հզոր բնազդը, որի միջոցով կարողանում ենք կառավարել յուրաքանչյուր իրավիճակ: Հավատացեք, եթե մենք գիտենք մեր կարողությունների սահմանը, ապա կանենք ամեն բան դրա սահմաններում և կձգտենք կատարելագործվել՝ կարողություններս ընդլայնելու նպատակով: Կպաշտպանենք մեզ անակնկալ անհաջողություններից և սպասվող հարվածներից, որոնք անպայման ազդելու են մեր կյանքի որակի վրա: Ինքնաճանաչումը անձի պաշտպանման ամենահզոր և ազնիվ զենքն է: Ճանաչելով ինքներս մեզ՝ կդիմակայենք յուրաքանչյուր դժվարության, և վստահ կլինենք, թե որ հանգամանքում կլինենք հաղթող, իսկ որում՝ պարտվող:

Երբ հայրենասիրությունը բնազդային զգացումից վերաճում է գիտակցական երևույթի, ապա հարց է առաջանում. ի՞նչն է ապահովում այդ անցումը: Համաձայն Նժդեհի՝ այդ գործընթացի հիմքում ընկած են ինքնաճանաչողությունը, վերապրումը: Այսինքն՝ իրական հայրենասիրությունը խարսխված է սեփական մշակույթի համամարդկային գծերի ճանաչման, ազգի պատմության լուսավոր էջերի վերապրման վրա: «Իմ հայրենիքը, - գրում է Նժդեհը, - դա մարդկայնորեն այն լավագույնն է, որ կա Հայաստանում» [7]:

Այստեղ իր դերն ունի մտավորականությունը, որն էլ ապահովում է ազգի բովանդակային ինքնաճանաչողությունը: Մտավորականության բացառիկ պա-

տասխանատվությանն առնչվող սեղմ ու տարողունակ մի ծրագիր է ձևակերպել Նժդեհը, և այդ ծրագիրը մինչ օրս արդիական է ու պարտադիր: Ըստ այդմ էլ նժդեհյան բանաձևմամբ՝ նա է իսկապես մտավորական, ով իր գործունեությամբ նպաստում է ազգային ինքնաճանաչմանը, դրանով իսկ հիմք ստեղծում ազգային ինքնագնահատականի ու արժանապատվության համար:

Առանց ազգային լավագույն արժեքների յուրացման՝ ներկան աղքատ կլինի, իսկ առանց ներկայի՝ ապագան դժգույն: Այդ իսկ պատճառով Նժդեհը կոչ է անում անցյալի, ներկայի և ապագայի ներդաշնակության. ազգը կարող է գոյատևել դրա շնորհիվ: Ինքնաճանաչումը մեր փրկության ու գոյության այսօրվա հրամայականն է: Նժդեհը գրում է. «Օր առաջ պետք է ճշդել մեր ցեղի նկարագրի այն գիծը, որ յաղթական հանդիսացավ անցեալ դարերի և փոթորիկների դեմ ու պարբերաբար կարելի դարձրեց մեր ազգային վերածնունդներն ու ցեղափոխությունները, ժամ առաջ պետք է ճշդել մեր ցեղի օգու այն հաղթական գիծը և յետ այս ու նրա վրա, միայն նրա վրա կառուցել մեր հայաշեն ու հայրենաշեն գործը, ու վերստին նրան միայն նրան կրթել գոյ ու գալիք վտանգների դեմ հաջորդաբար ճակատել կարողանալու համար» [8]: Նժդեհյան ինքնաճանաչողությունը կոչ է, ըստ որի պիտի որոնենք, գտնենք մեր դժբախտության իրական պատճառները, ճանաչենք մեր իսկական վերքերը, ախտորոշանքի պետք է ենթարկենք մեր ժողովրդի հոգին, որից հետո միայն խոսք կարող է լինել բուժման մասին: «Մեր պատմությունը յետ այսու աղետալի սխալների կրկնությունը չպետք է լինի, այլ սրբագրությունը» [9]:

Նժդեհը գտնում էր. այն ժողովուրդը, որն ինքն իրեն չի նվաճել, ընդունակ չէ մեծագործությունների: «Եղիր Հայ, նախ Հայ, որովհետև հայն իր պատմության մեջ ավելի մարդ եղավ, քան Հայ մարդ, և այդ իսկ պատճառով նրա ողբերգությունը եղավ անօրինակ…» [10]:

Նժդեհի կարծիքով՝ ինքնաճանաչումը մեր փրկության և հզորության հիմքն է: Յուրաքանչյուր անհատի մեջ, Նժդեհի կարծրքով, առկա են ցեղային անսահման կարողություններ, որոնք սակայն չեն իրականանում անինքնաճանաչողության հետևանքով: Անինքնաճանաչողության պատճառները, ըստ Նժդեհի, սխալ դաստիարակությունը, սխալ գաղափարախոսությունը և սխալ քաղաքականությունն են:

Ցեղի արժեքների ու առաքինությունների իմացությունից, դրանց նկատմամբ սիրուց, պաշտամունքից է ծնվում անհատի ազգային հպարտությունը: «Բարոյապես սնանկ է անհատը, որբ, նրան պակասում է ազգային հպարտանքի զգացումը-ծնունդ ազգային ինքնաճանաչողութեան, որ իր սնունդը առնում է իր պաշտամունքից դէպի այն ամէնը, ինչ որ գեղեցիկ է, վսէմ և հերոսական հայրէնի պատմության մեջ» [11]:

Նժդեհի համար մեծ ցավ է, որ մեզ չեն հասկանում օտարազգիները, բայց կրկնակի ցավ է, որ մենք մեզ չենք հասկանում: Արդյոք հայը ինքնաճանա՞չ է:

«Դեռ իր խոսքին անծանոթ է հայությունը և դրա համար էլ պարտվողական է: Նա դեռ չգիտէ չափն իր հոգևոր զօրութեան, նա չի զգում իր զօրութեան կարողությունը և չգիտե, թե ինչ պայմանների տակ կարող է զարգացնել և կիրառել այդ ուժը: Նա դեռ չի զգում այդ ուժը և չգիտե, թե ինչպես կարող է դառնալ որպես ցեղ» [12]: Անինքնաճանաչողությունը մեզ տանում է դեպի այլազգիններին նեցուկ փնտրելը և բավարարվել նրանց գնահատականներով: Մեզ թվում է, թե ուրիշները պետք է զբաղվեն մեր փրկության և պաշտպանության հարցերով: Շարունակելով միտքը՝ Նժդեհը գրում էր,որ այդ պատճառով մենք չունենք վճռական մենակի հոգեբանություն, ինքնուրույն կերպով որևէ բան անելու հավատ:

Գարեգին Նժդեհի ինքնաճանաչումը ցեղաճանաչումն է: Սա պետք է հասկանա յուրաքանչյուր հայ մարդ: Ինքնաճանաչումը մեր գոյության և փրկության այսօրվա հրամայականն է: Այդ պատճառով ամեն մարդ պետք է լինի ինքնաճանաչ, իսկ դա հնարավոր է միայն ազգաճանաչության շնորհիվ՝ իմանալով, թե ովքեր են եղել մեր նախնիները, ինչպես են ապրել, ինչով են հարատևել, ինչ արժանի գործեր են արել: Իմանալով և սովորելով, այդ ժառանգն իրավունք չունի ստացած ժառանգությունից հետ մնալու, առավել ևս այն անտեղի վատնելու: Նժդեհը պայքարում է նախնիների թողած ավանդների և սովորույթների կորստյան ու մշակութային հարստությունները վատնելու դեմ:

Նժդեհը ինքնաճանաչողության միջոցով կոչ է անում ազգին համալրվելու, զգաստանալու, վերքերը բուժելու, ամբողջանալու, գիտակցության գալու, հասկանալու, որ ինքն ապրելու ունակ ազգ է, ինքն ինքն է, պետք է գոյատևի և աշխարհին իր սուրբ խոսքն ասի: Սա վերաբերում է նաև անհատ մարդկանց, որոնք իրենց հոգևոր, մտավոր և ֆիզիկական կարողություններով աղքատաձև են, ազգին ոգի չեն ներարկում, չեն բուժում հայրենիքի վերքերը, այլ զբաղված են իրենց անձնական շահերով: Ապրելու և գոյատևելու ձգտող մարդը, ազգը, պետք է հույս և հավատ ունենա իր գործերի նկատմամբ, այլ կերպ ասած՝ գիտակցի իր ով լինելը: Նժդեհյան ինքնաճանաչումը ինքնահայտնություն է, ինքնահաստատում, որի շնորհիվ էլ տեղի է ունենում ինքնազորացում, որը հիմք է հանդիսանում ցեղագիտությանը, որից էլ սկիզբ է առնում ազգային արժանապատվությունն ու հպարտությունը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ լինելով անձի կայացման ու բնականոն զարգացման գլխավոր նախապայման, ինքնաճանաչողության գլխավոր նպատակն է յուրաքանչյուր հայի ոգում չգիտակցված հայը դարձնել գիտակցված: «Կուզեի որ դու՝ հայ երիտասարդ, որ դու յուրացնեիր ինքնաճանաչողու-

թյունը՝ որպես ուժի, հաղթանակի և բարձր երջանկության ամենակարճ ճանապարհ»: Ճանաչի՛ր քեզ, հայ երիտասարդ: Քո մեջ մի գանձարկղ կայ, անբաւ ու անհաշխ հարստութեամբ, բայց դու չես օգտվում նրանից, որովհետև քեզ պակասում է այդ արկղի ոսկէ բանալին-ինքնաճանաչողութիւնը [13]:

Գ. Նժդեհի ինքնաճանաչողության առաջարկած լուծումը միանգամայն նոր է, ինքնաճանաչումը բացահայտվում և իմաստավորվում է որպես ազգաճանաչողություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գ. Նժդեհ**. Որդիների պայքարը հայրերի դեմ, Ե. 2016, էջ 103:
2. **Գ. Նժդեհ**.Ամերիկահայությունը, ցեղը և իր տականքը, Սոֆիա, 1935, էջ 91:
3. **Գ. Նժդեհ**. Հատընտիր,Ե.2001, էջ 374:
4. Նույն տեղում, էջ 967:
5. Նույն տեղում, էջ 59:
6. Նույն տեղում, էջ 60:
7. **Գ. Նժդեհ**. Հատընտիր, Ե. 2001, էջ 354:
8. **Գ. Նժդեհ**. Հատընտիր, էջ 337:
9. **Գ.Նժդեհ**. Բաց նամակներ հայ մտավորականութեան, Բէյրութ, 1929,էջ 32
10. «Հայրենիք» օրաթերթ, 1963, 13 սեպտեմբեր, էջ 3:
11. **Գ. Նժդեհ**. Ցեղի ոգու շարժը, Սոֆիա, 1932, էջ 33:
12. **Գ. Նժդեհ**. Հատընտիր, էջ 375:
13. **Գ.Նժդեհ**. Որդիների պայքարը հայրերի դեմ, էջ 35:

А.В. БАГДАСАРЯН

ВОСПРИЯТИЕ САМОПОЗНАНИЯ ГАРЕГИНА НЖДЕ

Принимая во внимание новые вызовы, рассматриваются особенности самопознания Гарегина Нжде и его роль в националистической идеологии.

Ключевые слова: самопознание, достоинство, самодостижение, племенное познание.

A.V. BAGHDASARYAN

CONSEPTION OF SELF – RECOGNITION BY GAREGIN NZHDEH

According to new challenges, the features of self – recognition by Garegin Nzhdeh, and its role in the national ideology are considered.

Keywords: self discovery, dignity, gain, tribal knowledge.